խանգարող յօդուածները մերժված են։ Դատաստանական տուրքերի մասին վճռվեցաւ, որ նրանք փոքրացնվին յայտնի % աղքատների համար։ Այդ վճիռը կայացաւ բայխստագի համար անսպասելի կերպով։ Հարցը վերջացած էին համարում, երբ պատգամաւորներից մէկը մի գեղեցիկ ճառ խօսեց, պաշտպանեց աղքատներին, որոնք դատաստանական տուրքերի մեծութեան պատճառով զրկվում են արդարադատութենից, և առաջարկեց աղքատների համար տուրքերը փոքրացնել։ Այդ առաջարկութիւնը իսկոյն ընդունվեցաւ։ Վերջապէս բայխստագը մերժեց տալ հարկաւոր գումարը տնտեսական խորհրդի համար։ Բայխստագը մերժեց այդ պահանջը, ոչ թէ նիւթական հանգամանքները ի նկատ առնելով, այլ որովհետև այդ հիմնարկութիւնը անկանոն էր, ստեղծված չէր օրէնսդրական ճանապարհով, այլ կայսերական հրամանով և մի և նոյն ժամանակ նպատակ ունենալով վնասել ժողովրդական ներկայացուցիչներին։ Այս դէպքում մեծ ծառայութիւն մատուցին ազատամիտները, որոնք յիշեցին, թէ գերմանական ազգութեան պատմական կոչումը այն չէ, որ նա հաւանութիւն տայ միւս ազգութիւնների վրա գործած բռնութիւններին և պաշտպանի մի մարդու կամայականութիւնը, ինչքան մեծ ծառայութիւններ էլ մատուցած լինի այդ մարդը պետութեանը։

Իշխան Բիսմարկին և նրա կիսապաշտօնական լրագիրներին ամենից շատ զայրացրեց պահպանողականների վարմունքը արհեստաւորների և տնտեսական խորհրդի հարցերի վերաբերութեամբ։ Այդ կուսակցութեան մի բաժինը, որ „կայսերական“ է անուանվում, քուէարկեց ազատամիտների հետ, իսկ միւսները միջին ճանապարհ ընտրեցին. նրանք չը ներկայացան բայխստագի նիստին, թէպէտ իշխան Բիսմարկին անձնատուր եղած նրանց առաջնորդները իւրաքանչիւր անդամին առանձին հրաւիրատոմս ուղարկեցին։ Ազատամիտները ամբողջութեամբ կառավարութեան դէմ քուէարկեցին և նրանց պաշտպանեցին կենտրոնականները։ Բերլինի մէջ լուր է տարածված, որ բայխստագի վճիռը չի խանգարի իշխան Բիսմարկին այնու ամենայնիւ հրաւիրել տնտեսական խորհուրդը, որի համար նա միջոցներ է գտել այլ աղբիւրներից և արդէն հարկաւոր կարգադրութիւնները արել է։ Շատ կարելի է, որ նա այդպէս էլ վարվի, իսկ միջոցները երբէք չեն պակասի, քանի որ բայխստագը իշխան Բիսմարկի անմիջական կարգադրութեանը ահագին միջոցներ է յանձնել։ Միևնոյն ժամանակ մի այլ լուր էլ տարածված է Բերլինի մէջ, որի համեմատ բայխստագը մտադիր է խլել այդ միջոցները կանցլերից, եթէ նրանք կը գործադրվին բայխստագին վնասելու համար։ Այդ գործը կախված կը լինի ապագայ բայխստագից, բայց այժմ յոյս կայ, որ նոր պարլամենտը թոյլ չի տայ իրան անուշագիր թողնել։ Գերմանական բայխստագը հասկացաւ, թէ նրան ինչ ճանապարհով են տանում և յայտնեց, որ չէ ցանկանում մեռնել։ Նոյնպիսի յայտնութիւն արաւ և գերմանական հասարակութիւնը։

ՆԱՄԱԿ ԹԻԻԲՔԻԱՑԻՑ

Կ. Պոլիս, 11 յունիսի 1881

Այս օրերս ինձ հետ պատահած մի մանաւոր դէպք շատ անակնկալ արդիւնքներ արտադրեց, որոնցից ամենահետաքրքիրը այն է, որ մուսուլման արիստոկրատիայի օրգան «Ջերիդէի Հաւադիս» լրագիրը սկսեց մի շարք հետաքրքրական յօդուածներ հրատարակել. ոգանից մինը ուզարկում եմ ձեզ ներփակեալ։ Այդ յօդուածից դուք կը տեսնէք այն մխիթարական երևոյթը, որով Թիւրքիան սկսել է վերաբերվիլ հայոց խնդրին պարտ ու պատշաճ յարգանքով և շատ մեծ աչու երկիւղով. բայց աւելորդ է յիշեցնել ձեզ որ Թիւրքիան ոչ մի գործին կարեորութիւն չի տայ մինչև որ մի վախ չի ունենայ նորանից։ Ահա այս վախն էր, որ այսչափ ժամանակ ցանկալի էր տեսնել Թիւրքիայի սրտում, որի առաջին ուրախալի ազդեցիկը տալիս է այսօր մի նշանաւոր թիւրքական օրգան։ Ինչպէս այն օրը ասում էր մի հեղինակաւոր անձը թէ «մեր ձայնը այն ժամանակ կը սկսէ լսելի լինել Թիւրքիային, երբ նորա աչքը կը սկսէ վախենալ հայոց խնդրի հետևանքներից։» Այս շատ և շատ ճիշտ է, վասն որոյ մեծ ինքնակալութիւն ռուս մամուլի մէջ Թիւրքիայի վերաբերմամբ սպառնալից պրոպոգանդ անողներին, նոյնպէս և այն հայ մամուլին, որը շարունակում է իր յարձակողական ընթացքը Թիւրքիայի դէմ. հաստատ ազդեցից զիտեմ, որ ոչ մի յօդուած Ս. Պետերբուրգի և Մոսկվայի ռուս լրագիրներից, նոյնպէս և «Մշակի» չեն անցնում այստեղի Թիւրք խմբագրութիւնների ուշադրութիւնից, վասնորոյ փափագելի է, որ մեր հայ երիտասարդները Ս. Պետերբուրգ և Մոսկվա չը քնեն այսպիսի մի ստիպողական բոպէում։

Թիւրք լրագրի յիշեալ յօդուածը այն աստիճան արժանի է ուշադրութեան, որ տեղիս մի Ֆրանսիացի լրագիր խօսելով նորա վրա, հետևեալ սրախօսութիւնը արեց. «եթէ «Ջերիդէի Հաւադիսին» հարիւր միրա կաշառ տային հայերը, չէին կարող ի նպաստ իրանց մի այդպիսի յօդուած գրել տալ, որը գրեց նա իր այս համարի մէջ, վասնորոյ ցանկալի է, որ հայ երիտասարդները մի քանի դուէլ ևս կրկնեն Կ. Պոլսի մէջ, որով Թիւրք լրագիրները ստիպված լինեն աւելի ընդարձակ խոստովանութիւններ անել հայոց զօրութեան և բարոյական ուժի վերաբերմամբ։»

Ի հարկէ իրաւ է, որ Թիւրքիայի սիրտը առ ու դող և կասկած ընկնելու չափ հայոց խնդրի վերաբերմամբ, նա պիտի աշխատէր աւելի ճնշել հայերին, բայց միթէ չը պիտի համոզվինք վերջապէս այն ճշմարտութեան մէջ թէ՝ քանի լարը շատ ձգվի, նա այնչափ չուտ կը կտրվի. քանի Թիւրքիայի ճնշումները սաստկանան, այնչափ էլ հայոց աղաղակը պիտի աւելի բարձրանայ Եւրոպայի առաջ և դատի դեկավարողները աւելի մեծ էնէրգիայով և համերաշխութեամբ պիտի գործեն իրանց նպատակին հասնելու համար։ Թող ուրեմն համոզվեն կոյր հրապարակախօսները, որ մի քանիսների բռնած ընթացքը և կատարվող պրոպոգանդան բնաւ չունէ և չէր էլ կարող ունենալ այն «ազգակործան» հետևանքը, որի մասին մինչև հիմայ ևս չարունակում են ակնարկել անցեալ տարի Ս. Պետերբուրգի ռուս մամուլի մէջ ազմուկներ բարձրացնող մէկի վրա... Միթէ ժամանակ չէ թողնել գետնափոր և խաւարաշրջիկ կենդանիների դերը, տեսնելով նորա մէջ իրանց կարծեցեալ «չրջահայեցողութիւն, զգուշութիւն, խոհեմութիւն» և այլն այսպիսի ութիւններ։ Այստեղ էլ կան այդպիսի գետնափոր արարածներ, որոնք ասում են. «ախպար, Թիւրքիան մեզ վրա առաջ այսչափ կասկածաւոր աչքով չէր նայում, մինչդեռ հիմայ հայը բնաւ համարում չունէ, այլ նա հաւասարվեց յոյներին և բոլգարներին Թիւրքաց մեծամեծների առաջ։» Ահա ձեզ հայի սարկասրութեան մի նշան. կարծես որ հայոց ազգին շատ մեծ կորուստ է, որ Թիւրք փաշաները չեն ծիծաղի հայ էֆէնդիների երեսին նոցա ուսերը բարեկամաբար թակելով. այդպիսի կեղծ բարեկամութիւնից ինչ արդիւնք ստացանք մինչև հիմայ, որ ափսոսանք այժմ հայի, յոյնի և բոլգարների համանուն լինելու վրա Թիւրքաց առաջ։ Վերջապէս միթէ յոյների և բոլգարների պէս քաղաքական և ազգային ինքնաճանաչութիւն ցոյց տալը աւելի նախապատիւ չէ, քան թէ անգոյն, առանց որ և է ձգտումների և ազգային հպարտութեան լինելը։ Այստեղի էֆէնդիների տեսակիցն է անչուշտ և մի քաղաքի մի «շատ խոհեմ, չրջատես և հմուտ» հայ լրագիր, որի չրջատեսութիւնը այն աստիճան է հասնում, որ նոյն իսկ քաղաքի մէջ մի օտար մարդ ոչ լսել է և ոչ տեսել «խոհեմ և հմուտ» խմբագրի երեսը... Այսպիսիներն են դեռ յանդգնում ուրիշներին խրատ կարդալ, բայց աւել ճիշդը՝ ֆեդիեսոնների մէջ մտած խեղկատակութիւն ու պամպուլիութիւն անում։

Գրիգոր Նիկողոսեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Հայրենիք» լրագրում կարդում ենք հետևեալը՝ «Վ. Սուլթանն յանձնախումբ մը նըշանակեց բարենորոգմանց ծրագիր մը պատրաստելու համար ըստ 61-որդ յօդուածի Բերլինի դաշնագրոյն, որ Արմենիոյ վարչութեան կը վերաբերի։ Այդ ծրագիրը տէրութեանց պիտի ներկայացվի և Բ. Դուռը նախաձեռնութիւն պիտի ունենայ բարենորոգմանց ներմուծման գործին մէջ։ Յոյսեր կը յայտնվին թէ Սուլթանը տեսակ մը բարենորոգման ծրագիր հրատարակել պիտի տայ ընդհանուր գաւառաց վարչութեան համար, նպատակ ունենալով առաջն առնուլ Եւրոպիոյ դիւանագիտական միջամտութեան։»

—Կ. Պոլսի լրագիրներում կարդում ենք։ «Մէսէնճերը» կրսէ թէ օսմանեան նախարարք կիրակէ օր Բ. Դուռը ժողով գումարելով, Հայաստանի մէջ գործադրելի բարենորոգմանց ծրագիրը քններ են, զոր վեհ. Սուլթանին վաւերացնել տալէ ետքը, դեսպանաց պիտի ներկայացնեն։»

—Նօրվէգիայի պարլամենտը մերժեց թագաժառանգի տարեկան ռոճիկը 50,000 մարկով աւելացնել։

—Մարսէյլի մէջ անբաւականութիւնները ֆրանսիացիների և իտալացիների մէջ չարունակվում են։

—Ջագրէբի մէջ դարձեալ պատահել է մի երկրաշարժ։

հաղորդած տեղեկութիւնը բաւական պարզ էր։ Իշխանը անցել էր «մազէ կամուրջից», այսինքն կատարել էր այն սարսափելի պատյար լեռների տարափների միջով, որը այնքան անձնավստահութեամբ յանձն առեց նա։ Այժմ թշնամին գտնվում էր երկու հայ բանակների մէջտեղում և հեշտ էր երկու կողմից ջարդել նրան։

Մի քանի բոպէում այդ ուրախալի լուրը տարածվեցաւ բոլոր հայ զինուորների մէջ, բոլորը առիւծի սիրտ և արծուի թռիչք ստացան։

—Ցղերք, ձեր հոգուն մատաղ, ձայն տուեց ծերունի զօրապետը, արագութեամբ իր գունդերի միջից անցնելով,— այնպէս չարժվեցէք, որ ոչ մի հոգի ձեռքից բաց չը թողնէք։

Թշնամու զամբուրակները կրկին որոտացին։

—Այդ զամբուրակները մեր գալէն տարան, ասաց հայ զինուորներից մէկը.—մինչև երբ դրանց ձեռքում պիտի թողնենք...

—Շուտով կը խլենք... պատասխանեց մի ուրիշ զինուոր։

Այդ միջոցին թշնամու զօրքերի մէջ նկատվեցաւ խռովութիւն։ Նրանց ետեից նոյնպէս կրակ էին թափում։

—Բայինդուրը հասաւ... լսելի եղան հարիւրաւոր ուրախալի ձայներ։

Թշնամին սեղմվեցաւ երկու կրակների մէջ։ Բայց նա այնքան յամառ էր, որ հեշտութեամբ անձնատուր չէր լինի։ Կռիւը իւրաքանչիւր կողմից, զանազան կէտերի վրա, կատաղութեամբ չարունակվում էր։ Օդը մռայլված էր թանձր ծխով։

Այդ միջոցին մի խումբ, Աւթանդիլ գնդապետի առաջնորդութեամբ, գնդակների կարկուտի միջից անցնելով, յարձակվեցաւ ճեղքել թշնամու վաշտերը և տիրել զամբուրակներին։ Նրանցից մէկը, մի երիտասարդ, առաջ անցնելով, արկեցին և նրանց պաշտպանեցին կենտրոնականները։ Բերլինի մէջ լուր է տարածված, որ բայխստագի վճիռը չի խանգարի իշխան Բիսմարկին այնու ամենայնիւ հրաւիրել տնտեսական խորհուրդը, որի համար նա միջոցներ է գտել այլ աղբիւրներից և արդէն հարկաւոր կարգադրութիւնները արել է։ Շատ կարելի է, որ նա այդպէս էլ վարվի, իսկ միջոցները երբէք չեն պակասի, քանի որ բայխստագը իշխան Բիսմարկի անմիջական կարգադրութեանը ահագին միջոցներ է յանձնել։ Միևնոյն ժամանակ մի այլ լուր էլ տարածված է Բերլինի մէջ, որի համեմատ բայխստագը մտադիր է խլել այդ միջոցները կանցլերից, եթէ նրանք կը գործադրվին բայխստագին վնասելու համար։ Այդ գործը կախված կը լինի ապագայ բայխստագից, բայց այժմ յոյս կայ, որ նոր պարլամենտը թոյլ չի տայ իրան անուշագիր թողնել։ Գերմանական բայխստագը հասկացաւ, թէ նրան ինչ ճանապարհով են տանում և յայտնեց, որ չէ ցանկանում մեռնել։ Նոյնպիսի յայտնութիւն արաւ և գերմանական հասարակութիւնը։

արծուի արագութեամբ ընկաւ Թիւրքաց գլխաւոր դրօշակակրի վրա, և իր որի մի հարուածով նրան գետին տապալելով, խլեց դրօշակը։ Այդ միջոցին մի գնդակ անցաւ նրա ոտքի ազդրի միջից։ Նա վեր բարձրացրեց դրօշակը, և «կեցցէ Դաւիթ բէկ» գոչելով, ծիծաղելով ասաց.

—Ես այդ ոտքից հէնց առաջ էլ կաղում էի...

Եւ իրաւ, նա երևանցի կաղ Օհանէսն էր։

Դրօշակի յափշտակութիւնը ազդեց թշնամու զօրքերի մէջ ընդհանուր վհատութիւն։ Նրա վրա կարմիր գոյնով նկարված էր Ալիի աչը, որ հովանաւորում էր նրանց, որ ուժ և զօրութիւն էր տալիս նրանց։

Բայց մի փոքր հեռու կատարվում էր սարսափելի կոտորած։ Աւթանդիլի խումբը կռվում էր Թիւրքաց թնդանօթաձիգների հետ։ Հայերը աշխատում էին գրաւել թնդանօթները, իսկ Թուրքերը պաշտպանում էին։ Այստեղ վառօդի փոխարէն գործում էր սուր երկաթը։ Հայոց սուրները հրաշք էին կատարում։ Արիւնը առուակներով վազում էր։ Մարդիկ տապալվում էին մինը միւսի վրա...

—Անիրաւ, մինչև երբ պիտի տանջես մեզ... գոչեց Աւթանդիլ գնդապետը և իր ծանր սուրը իջեցրեց մի վիթխարի Թուրք զինուորի գլխին, որը տասնից աւելի վերք ստանալուց յետոյ, դարձեալ ձեռքից բաց չէր թողնում թնդանօթը։

Նա թնդանօթի փողը գրկած պահելով, այնպէս էլ մնաց, միայն ճեղքված գլուխը թեքվեցաւ մի կողմ, և տաք տրիւնը շատրուանի նման դուրս ցայտելով խոր վէրքից, ներկեց իր պաշտպանած մահային անօթը։ Գնդապետը ձեռքով գետին գլորելով գիակը, գրաւեց թնդանօթը։ Մնացած թնդանօթները նոյնպէս անցան հայերի ձեռքը։

Մինչ այստեղ այս էր կատարվում, միւս կողմից Բայինդուր իշխանը իր որստալից ձայնով գոռում էր իր զինուորներին.

—Ցղերք, չարժէ դրանց վրա վառօդ փչացնել, ծակծկեցէք, ծակծկեցէք...

Եւ հայ զինուորները գրոհ տալով, մէկը սրով, միւսը նիզակով, մի այլը սուինով, ոմանք հասարակ քարերով խորտակում էին պատահած զինուորին։ Կոտորածը երկու կողմից ևս տեսեց մի քանի ամբողջ ժամ, մինչև Թուրքերը ազատակեցին,

—Ռայեան... ռայեան...

Այսինքն անձնատուր ենք լինում կամ հպատակում ենք։

Բայինդուր իշխանը և նրա հետ չատերը այն կարծիքը յայտնեցին, թէ պէտք է բոլորին կոտորել, բայց ծերունի զօրապետը ընդդիմացաւ, հրամայելով, միայն զինաթափ անել և գերի վերցնել։ Թշնամու անասունները, սայլակները և անագին քանակութեամբ ռազմամթերք ընկան հայերի ձեռքը։ Այդ ճակատամարտի մէջ հայերը կորցրին մօտ 300 հոգի, բայց թշնամուց ընդամենը ազատուածների թիւը 2,000-ից աւել կը լինէր, չը հաշուելով վիրաւորներին, որ համեմատաբար խիստ շատ էին։

—Այդ բոլոր դաղմաղալի մէջ, ասաց Բայինդուր իշխանը մօտենալով ծերունի զօրապետին,—մի ուրախալի բան կայ միայն, որ մենք ձեռք ձգեցինք թշնամու թնդանօթները, որ մենք չունէինք։

—Այդ ուղիղ է, բերդը պաշարելու ժամանակ հարկաւոր կը լինեն մեզ, պատասխանեց ծերունի զօրապետը իր սովորական բարի ժպիտով։

—Ես կարծում եմ, որ բէկն էլ շատ դոհ կը լինի դրանով. նա սիրում է թշնամու զէնքերը խլել, յետոյ իր դէմ գործ դնել։

—Բայց որտեղ մնաց այդ բէկը, չէ երևում, հարցրեց Բայինդուր իշխանը իր չուրջը նայելով, կարծես բէկը նրանց հետ լինէր։

Դեռ ծերունի զօրապետը չը պատասխանած, յայտնվեցաւ մի սուրհանդակ, որը հաղորդեց, թէ բէկը Թորոս իշխանի հետ և իրանց մօտ ունեցած զօրքերով մտան կիրճի մէջ, այնտեղից անցնում են դէպի բերդը գնալու համար։ Նա աւելացրեց, որ բէկին արդէն յայտնի էր կատարված յաղթութիւնը, և այդ պատճառով նա անհերկիւղ կերպով մտաւ կիրճի մէջ, գիտէր, որ ճանապարհը թշնամիներից մաքրված է։

—Իսկ Մխիթար սպարապետից լուր չունէք, հարցրեց սուրհանդակից ծերունի զօրապետը։

—Ունեմ, նա էլ մի գեղեցիկ յաղթութիւնով դուրս է եկել Կարա-բուրունի անցքից, որ բռնած էր թշնամիներով։ Այժմ բերդին հասած կը լինի սպարապետը։

—Իսկ մենք ինչ սպասելիք ունենք, ասաց Բայինդուր իշխանը, և հրաման տուեց ճանապարհ ընկնելու։

Գերիների թնկերը կապեցին չուաններով, նրանցից խլած ռազմամթերքը բարձեցին նրանց սայլակների վրա, նոյն սայլակների վրա տեղաւորեցին և հայ վիրաւորներին, յետոյ ճանապարհ ընկան։

Բոլորովին մութն էր, երբ բէկը Թորոս իշխանի հետ մի կողմից, Մխիթար սպարապետը միւս կողմից, հասան բերդին։ Երբ Բայինդուր իշխանը մէլիք-Փարսադանի հետ եկան, սկսվեցաւ պատշարումը։

(Կը չարունակվի)